Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 10 դեկտեմբերի 2007թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը նախագահությամբ՝ Հ.Նազարյանի, անդամակցությամբ՝ Կ.Բալայանի, Վ.Պողոսյանի, քննության առնելով ՀՀ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի կողմից ներկայացված դիմումի ընդունելիության հարցը

Պ Ա Ր Զ Ե Տ

ՀՀ քաղաքացի Ռուբեն Թորոսյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ ընտրական օրենսգրքի 40.1 հոդվածի 3-րդ կետի՝ «Դիմումը պետք է լինի ստորագրված դիմողի կողմից» դրույթի սահմանադրականությունը:

Դիմումատուն Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում վիճարկել է ՀՀ ԿԸՀ-ի անգործությունը՝ կապված ՀՀ ընտրական օրենսգրքի վերոհիշյալ նորմի կիրառման հետ եւ սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածի պահանջներին:

Դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4 եւ 5 մասերի, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է նաեւ սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Նկատի ունենալով դիմումում վիճարկվող օրենքի դրույթի առնչությունն ընտրական իրավունքին, առաջնորդվելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի առաջին մասի «ժԴ» կետի նորմով, անհրաժեշտ է դիմումատուին ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ մասով, ՀՀ ՍԴ 2-րդ դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Տ

1. ՀՀ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումը՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 40.1 հոդվածի 3-րդ կետի՝ «Դիմումը պետք է լինի ստորագրված դիմողի կողմից» դրույթի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային ժողովին:

2. Դիմումատուին ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՐՈՒԹՅՈՒՆ